



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԵՆՔ
ՄԵՐ ՌԵՍՊՈՆԲԼԻԿԱՅԻ ՎԵՐԱՎՈՐ
ԵՐԵՎԱՆԻ ՑԱՆԿԱՆ ՑԵՂԱԽՄԲԻ
ՀԱՎԵՐԸ

~~42~~

~~Jaycees 6/1/88~~

~~Jaycees 4/2~~

~~4/10/88~~

~~16~~

~~budget all day~~

636.5

Օգնություն դասախոսին

Ա. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս

ՀԱՅՆՈՐԵՆ ՏԱՐԱԾԵՆՔ ՄԵՐ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ-
ՅՈՒՄ ԵՐԵՎԱՆՑԱՆ ՑԵՂԱԽՄԲԻ ՀԱՎԵՐԸ

A 35942



В помощь лектору

С. К. КАРАПЕТЯН
Академик АН Армянской ССР

**Широко распространим в нашей республике
шур ереванской породной группы**

(На армянском языке)

**Общество по распространению политических и научных знаний
Армянской ССР
Ереван—1963**

Հավերի երևանյան ցեղախումբը ստեղծվել է Հայաստանում վերջին տասնամյակի ընթացքում, մեր պայմաններին լավ հարմարված պրիմիտիվ ցեղի հավերի և ամերիկյան ծագում ունեցող բուծարանային երկու ցեղերի՝ ոռղայլանդների և ավստրալորպների բարդ վերարտադրական տրամախաշման և խառնածինների նպատակադիր աճնացման եղանակով։ Նոր ցեղախումբը ստեղծվել է գիտնականների, թոշնաբուծական սովխողների, ֆաբրիկաների, կոլտնտեսային ֆերմաների, ինկուբատորային-թոշնաբուծական կայանների մասնագետների և արտադրության մեջ անմիջապես աշխատող թոշնապահների համատեղ աշխատանքով և միահամուռ ջանքերով։ Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում բարձր մթերատութունների նոր ցեղախումբ ստեղծելու հաջողության գլխավոր գրավականն այն էր, որ ցեղագոյացման աշխատանքները տարվում էին ելնելով միշուրինյան կենսաբանության այն սկզբունքից, որ օրդանական աշխարհի զարգացման պրոցեսում որոշիչ դերը պատկանում է կյանքի պայմաններին, որ օրդանիզմը և կյանքի պայմանները իրենցից ներկայացնում են մի անբաժանելի միասնություն։

Մեզ հաճախ են հարցնում, թե արդյոք միջցեղային տրամախաշումը նոր ցեղ ստանալու միակ եղանակն է, արդյոք տեղական հավերի տրամախաշումը կուլտուրական ցեղերի հետ առաջինների բարելավման միակ ուղին էր և, վերջապես, ինչու չէր կարելի կուլտուրական այն ցեղերը, որոնք օգտագործվել են տրամախաշման նպատակով, բազմացնել և տա-

րածել մեր ռեսպուբլիկայում մաքուր վիճակում, այլ կերպ ասած կլիմայավարժեցման (ակլիմատիզացիայի) եղանակով:

Այսպիսի հարցասիրությունը զուրկ չէ տրամաբանական հիմքից, ուստի նրան պետք է տալ պատասխան թեկուզ համառուս:

Միջցեղային տրամախաշումը թե թոշնաբուծության մեջ և թե անասնաբուծության մյուս ճյուղերում իհարկե նոր ցեղեր ստանալու միակ ուղին չէ, նոր ցեղեր կարելի է ստանալ նաև զտացեղ բուծման եղանակով: Բայց հարյուրամյակների փորձը ցույց է տվել, որ եթե տրամախաշման միջոցով կարելի է թըռչունների նոր ցեղեր ստեղծել 10—15 տարվա ընթացքում, ապա զտացեղ՝ «ինքն իր մեջ» բուծելու եղանակով նոր ցեղ ստանալու համար պահանջվում է անհամեմատ ավելի երկար ժամանակ՝ տասնյակ տարիներ, ընդորում ոչ միշտ է աշխատանքը հաջողությամբ պսակվում: Նույնը կարելի է ասել գյուղատնտեսական կենդանիների տարբեր տեսակների նըկատմամբ: Ասածներս հաստատելու համար բերենք երկու որինակ. Ռուսաստանում բուծվող հավերի հնագույն ցեղերից մեկը որլովյան ցեղն է, որն ստեղծվել է «իր մեջ» բուծելու եղանակով, ավելի քան 100 տարիների ընթացքում, այն ժամանակ, երբ պերվոմայսկից ցեղը տրամախաշման եղանակով ստեղծվեց մոտ 15 տարվա ընթացքում: Տավարի ջերսեյական հայտնի ցեղը, որը աշքի է ընկնում կաթի յուղայնության բարձր տոկոսով (5—6 %) ստացվել է որի մեջ» բուծելու եղանակով, որի համար պահանջվել է շուրջ 150 տարի, իսկ տավարի կոստրոմյան հոչակավոր ցեղը տրամախաշման եղանակով ստեղծվեց մոտ 20—25 տարվա ընթացքում, նույնը կարելի է ասել Հայաստանում, Աղրբեջանում, Վրաստանում և Դաղստանում ստեղծված տավարի կովկասյան գորշ ցեղի մասին:

Վերջին 10—15 տարիների ընթացքում Սովետական Միության տարբեր մասերում ստեղծվել են գյուղատնտեսական թոշունների-հավերի, սագերի, բաղերի և հնդկահավերի մոտ 15 նոր ցեղախմբեր, դրանք բոլորն էլ առանց բացառության,

ստացվել են տրամախաշման եղանակով։ Հավերի ոռուսական սպիտակ ցեղը, որը ներկայումս՝ ամենատարածվածն է ՍՍՌՄ-ում, նույնպես սուեդցվել է տրամախաշման ճանապարհով։ Այդ մեթոդով են ստեղծվել նաև հավերի ամերիկյան ծագում ունեցող մսածվատու ցեղերը (ոռղայլանդները, պլիմուտրոկները, նյու-հեմպչերները և այլն)։ Մենք մեր աշխատակիցների հետ 6—7 տարի շարունակ սելեկցիոն-տոհմային աշխատանք էինք տանում տեղական հավերի հետ, նպատակ ունենալով պարզելու թե հնարավոր չէ արդյոք «իր մեջ» բուծել և ընտրության ճանապարհով արմատապես վերափոխել նրանց ժառանգական հատկանիշները և ղգալիորեն բարձրացնել մթերատվությունը։ Այդ ուսումնասիրությունները ցուց տվին, որ լավ կնրակրման և սելեկցիայի շնորհիվ տեղական հավերի ձվատվությունը շնայած որ նկատելիորեն ավելանում է, սակայն այնուամենանիվ շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա՝ մոտ 100 ձվի սահմաններում, իսկ կենդանի քաշը գրեթե չի փոփոխվում, մնալով 1,5 կգ սահմաններում, նույնը վերաբերում է ձվի քաշին, որի մեջին կշիռը 50—51 գրամից չի անցնում։ Շատ աննշան է փոփոխվում նաև նրանց կոնստիտուցիոն տիպը և մարմնակազմությունը միատարրություն չի ստեղծում, փետրածածկի գույնը շարունակում է մնալ խայտաբղետ։ Ուսումնասիրությունների այս արդյունքները մեզ վերջնականապես համոզեցին, որ տեղական հավերի կատարելագործման ուղին պետք է փնտրել տրամախաշման մեջ։ Այդ տարիների ընթացքում մենք միաժամանակ ուսումնասիրում էինք թե ներմուծված կուլտուրական ցեղերը (ոռղայլանդներ, ավստրալորպեր, պլիմուտրոկներ, լեգորներ և պերվոմայսկիներ) ինչպես են հարմարվում մեր տեղական պայմաններին։

Տարիների դիտողությունները ցուց տվին, որ ներմուծված այդ ցեղերը մաքուր բուծման դեպքում շատ վատ են հարմարվում տեղական պայմաններին, արագ կերպով կորցնում են իրենց արժեքավոր ժառանգական հատկանիշները՝ բարձր ձվատվությունը և մեծ կենդանի քաշը, խիստ կերպով ընկնում

է նրանց կենսունակությունը, շատ վատ են աճում մատղաշները, որոնց անկումները հաճախ հասնում են մինչև 50—60%։ Շարդ դարձավ, որ ներմուծված կռւլտուրական ցեղերի կլիմայավարժեցման ուղին նույնպես ցանկալի արդյունք չի տալիս։ Դրա պատճառը բացատրել դժվար չէ։ Ներմուծված բուծարանային ցեղերը ստեղծվել են այլ բնակլիմայական և տընտեսական պայմաններում և այդ պայմանների արգասիք են հանդիսանում, պարզ է, որ երբ նրանք փոխադրվում են նոր, իրենց բիոլոգիական բնույթին շհամապատասխանող միջավայր, արագորեն սկսում են կորցնել իրենց ժառանգական հատկանիշները և ամենից առաջ կենսունակությունն ու բարձր մթերատվությունը։


Ահա թե ինչու մենք վերջնականապես հանգեցինք այն եղբակացությանը, որ յուրաքանչյուր բնատնտեսական շրջանուսպուրիկա, մարզ, երկրամաս, պետք է ստեղծի իր պայմաններին լավ հարմարված բարձր մթերատու բուծարանային ցեղեր, այդ նպատակի համար օգտագործելով տրամախաշման և խառնածինների նպատակառողջված աճեցման եղանակը, որը հնարավորություն է տալիս նոր ցեղի մեջ միավորել մի կողմից տեղական ցեղերի արժեքավոր հատկությունները և ամենից առաջ բարձր կենսունակությունը՝ տեղական պայմաններին լավ հարմարվածությունը, իսկ մյուս կողմից բուծարանային ցեղերի տոհմային արժանիքները՝ բարձր ձվատվությունը, մեծ կենդանի քաշը, ձվի մեծ կշիռը և այլն։ Շատ կարեոր է գիտենալ, որ այդ ճանապարհով ստեղծված ցեղերը ոչ միայն միավորում են ելակետային ցեղերի բնորոշ հատկությունները, այլև ձեռք են բերում այնպիսի նոր արժեքավոր ժառանգական հատկություններ, որոնք բացակայում էին ելակետային ցեղերի մոտ։

Ի՞նչ ԱՐԺԱՆԻՔՆԵՐ ՈՒՆԵՆ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՑԵՂԱԽՄԲԻ
ՀԱՎԵՐԸ

Ամենից առաջ նրանք կոմբինացված մթերատվության ուղղություն ունեն, այդ պատճառով էլ կոչվում են հանրօգտագործելի, կամ մսաձվատու: Հավերի տարեկան միջին ձվատրվությունը նորմալ կերակրման պայմաններում կազմում է 150—175 ձու, երիտասարդ հավերի՝ վառեկների միջին կենդանի քաշը կազմում է 2,1—2,2 կգ, իսկ հասակավոր հավերինը՝ 2,3—2,5 կգ:

Առանձին հավեր կշռում են 3,5—3,8 կգ: Աքաղաղների միջին քաշը 3—3,5 կգ, իսկ մաքսիմումը հասնում է 4,5—5 կգ: Ձվի միջին կշիռը 56—58 գրամ է, մաքսիմումը հասնում է 75—80 գրամի:

Այսպիսով նոր ցեղախմբի հավերը տեղական հավերին գերազանցում են ձվատվությամբ մոտ երկու անգամ, կենդանի քաշով մեկ ու կես անգամ, իսկ ձվի մեծությամբ մոտ 15%: Նրանք շատ լավ հարմարվում են մեր ոեսպուրլիկայի տարբեր բնակլիմայական պայմաններին, սկսած Արարացյան հարթավայրից, վերջացրած բարձրադիր լեռնային շըրջաններով: Բիոլոգիական և տնտեսական այս արժեքավոր հատկությունը նրանք ժառանգել են տեղական հավերից: Նոր ցեղախմբի հավերի բիոտնտեսական արժանիքներից մեկն էլ նրանց բարձր ձմեռային ձվատվությունն է. աշնան-ձմեռային 6 ամսում նրանք տալիս են 80—85 ձու, կամ տարեկան ձվատվության մոտ կեսը: Այս հատկանիշը նրանք ժառանգել են մի կողմից ավստրալորպերից, իսկ մյուս կողմից լրացուցիչ լուսավորության ներդործության տակ, որը տարիներ շարունակ օգտագործվում էր ցեղագոյացման պրոցեսում, որպես արագին միջավայրի հզոր գործոններից մեկը:



Նկ. 1. Երևանյան ցեղախմբի հավ, որի կենդանի քաշն է 3,5 կգ.


Երևանյան ցեղախմբի հավերի մյուս արժեքավոր հատկությունը նրանց համեմատական ֆիզիոլոգիական վաղահասությունն է և մատղաշների աճի բարձր տեմպը։ Վառեկների ձվարկումն սկսվում է հիմնականում մոտ 6-ամսական հասակում (մյուս մսաձվատու ցեղերը մասսայական ձվարկումն սկսում են 7—8 ամսական հասակում), այսինքն նույն հասակում, որը սահմանված է ձվատու ուղղություն ունեցող ուսական սպիտակ ցեղի համար։

Դա հնարավորություն է տալիս վաղ ճտահանությունից ստացված և լսով զարգացած վառեկներից ճտահանության նույն տարուած ստանալ մինչն 60—70 ձու։

Նոր ցեղախմբի թույունները օժտված են բարձր տոհմային

Համկանիշներով, որ ոնք կայուն կերպով հաղորդում են իրենց ժառանգներին սերնդից-սերունդ։

Վերևում մենք բերեցինք այդ ցեղախմբի թոշունների մթելատվության միայն միջին ցուցանիշները, բայց տոհմային տնտեսությունների էլիտարյան խմբերում (էջմիածնի թոշնարութական ֆարբիկայի մայրական հոտում, Զարբախի էքսպերիմենտալ բազայում) հարյուրավոր թոշուններ են հայտնարերվել, որոնց տարեկան ձվատվությունը հասնում է 200—230-ի, իսկ առանձին ռեկորդիստներ տալիս են 240—242 ձռունենալով 2,3—2,4 կգ կենդանի քաշ։ Այսպիսի արժեքավոր կորիղի առկայությունը խոսում է այն մասին, որ նոր ցեղախմբի մթերատվության հետագա բարձրացման համար դեռ պոտենցիալ մեծ հնարավորություններ կան։ Այդ հնարավո-



Նկ. 2. Երևանյան ցեղախմբի աքաղաղ, որի կենդանի քաշը մեկ տարեկան հասակում կազմում է 3 կգ.

բությունները օգտագործելու լավագույն ուղին գծային բուծումն է: Ներկայումս տոհմային տնտեսություններում հիմնադրված են մի քանի գծեր: Յերենք դրանցից միայն մեկի՝ № 4171 աքաղաղի գծի բնութագիրը: Դեռ 1960 թվականին նրա 24 աղջիկների միջին ձվատվությունը կազմեց 155—221 ձու 17 տղաներից 14-ի միջին կենդանի քաշը կազմեց 3,5—4,5 կգ: Այդ գծի սերունդը ներկայումս հասնում է մի քանի հարյուրի, որոնք նույնպես աշքի են ընկնում բարձր մթերատվությամբ: Հաշվի առնելով նոր ցեղախմբի մի շարք տնտեսական և բիոլոգիական արժանիքները, Հայաստանի Մինիստրների սովետը 1960 թ. նոյեմբերի 14-ի իր որոշումով այն հաստատեց որպես ինքնուրույն ցեղախումբ: Երևանյան ցեղախումբը, ինքնուրույն ցեղի իրականքով ունեցվել է ուսապուրլիկայի բոլոր գյուղատնտեսական գոտիներում բուծելու համար: Ներկայումս ցեղախմբի թոշունների քանակը միայն կոլտնտեսություններում, թոշնաբուծական սովխոզներում և ֆաբրիկաներում հասնում է ավելի քան 200 հազարի, այդ թվում մոտ 40 հազար ածաններ: Հիմնական գյուղաքանակը կենտրոնացված է Երևանի, Էջմիածնի և Լենինականի թոշնաբուծական ֆաբրիկաներում, Գետամեջի և Լիճքի սովխոզներում, անասնաբուծական և անասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտի Զարքախի Շքսպերիմենտալ բազայում, Շահումյանի և Ախուրյանի ինկուբատորային-թոշնաբուծական կայանների տոհմային ֆերմաներում, Էջմիածնի արտադրական վարչության Աղավնատան և Վերին Քյոլանլու կոլտնտեսություններում, Հռկտեմբերյանի, Արտաշատի, Արուլյանի, Մարտոն, Բասարգեշարի, Շամշադինի և մի շարք այլ շրջանների կոլտնտեսություններում: Այդ թոշուններից մեծ քանակությամբ բուծվում են կոլտնտեսությունների, բանվորների և ծառայողների անձնական տնտեսություններում:

Անցյալ տարի ԽԹԿ-ը սովխոզների և ֆաբրիկաների ինկուբատորների հետ միասին արտադրեցին ավելի քան 300 հազար մեկ օրական ճուտ: Այս տարի ինկուբացիայի հնարավորությունները էլ ավելի են ընդլայնվել: Միայն փետրվար-

Հունիս ամիսների ընթացքում եղած ածանների գլխաքանակից կտացվի, ոչ պակաս մեկ միլիոն ինկուբացիոն ձու, կամ 700—750 հազար մեկօրական ճուտ։ Հետևաբար ռեսպուբլիկայի բոլոր կոլտնտեսություններն ու սովխողներն էլ հնարավորություն կունենան ստանալու և աճեցնելու այդ արժեքավոր ցեղախումբը։

Երևանյան ցեղախմբի հավերը ձվատվությամբ շեն զիջում արդյոք ոռոսական սպիտակ ցեղին։

Երկար տարիների փորձը անվիճելիորեն հաստատում է, որ կերակրման և պահպաժքի միանման պայմաններում երեւանյան ցեղախմբի հավերը ունենալով անհամեմատ ավելի մեծ կենդանի քաշ, ձվատվությամբ նույնպես շեն զիջում ոռոսական սպիտակ ցեղին։ Ասածներս հաստատելու համար բերնը փաստեր էջմիածնի թոշնարուծական ֆաբրիկայի մայրական հոտում 1959—1962 թվականների ընթացքում ցեղախմբի հավերի միջին ձվատվությունը (4 տարվա միջինը) կազմել է 171,5 ձու, իսկ սպիտակ ոռոսական ցեղի հավերինը՝ 143,6 ձու։

Տարեկան միջին ձվատվությամբ երևանյան ցեղախմբի հավերը շեն զիջել ոռոսական սպիտակ ցեղի հավերին նաև կենդանականի և երևանի թոշնարուծական ֆաբրիկաներում, Աշտարակի արտադրական վարչության Գետամիջի թոշնարուծական սովխողում, Մարտունու արտադրական վարչության Լիճքի սովխողում, Էջմիածնի արտադրական վարչության Աղավնատուն։ և Վերին Քյոլանլու գյուղերի կոլտնտեսությունների թոշնարուծական ֆերմաներում։

Բերելով այս համեմատությունները մենք հեռու ենք սակայն ոռոսական սպիտակ ցեղի հավերի արժանիքները որևէ չափով թերագնահատելու մտքից։ Այդ ցեղը մեր Միության մեջ, այդ թվում և մեր ռեսպուբլիկայում ամենատարածված

ցեղն է և նույնպես ռայոնացված է: Լավ կերակրելու և պահ-վածքի պայմաններում ռուսական սպիտակ ցեղի հավերը բարձր ձվատվություն են ունենում, լավ հարմարվում են վանդակային պահվածքին, վաղաճաս են, լավ կոնսոլիդացված և միատարր են: Լավ արդյունք է ստացվում երբ այդ ցեղի հավերը օգտագործվում են արդյունաբերական տրամախաշման մեջ երևանյան ցեղախմբի աքաղաղների հետ:

Տրամախաշման այդ եղանակը պետք է լայնորեն տարածել ռեսպոբլիկայի կոլտնտեսությունների և սովխողների ապրանքային թոշնաբուժական ֆերմաներում:

Առանձնապես մեծ հեռանկարներ են բացվում մեր ռեսպոբլիկայում մսացու ճտերի-բրոյլերների արտադրությունը մեծ մասշտաբներով զարգացնելու համար: Առաջիկա 3—4 տարում միայն քաղաքամերձ տնտեսություններում տարեկան պետք է աճեցվեն 5 միլիոն մսացու ճտեր: Հատուկ փորձերը ցույց տվին, որ այդ նպատակի համար մեծ է ֆեկտիվությամբ կարող են օգտագործվել երևանյան ցեղախմբի մատղաշները: Անասնաբուժական և անասնաբուժական ինստիտուտի ասպիրանտ ընկ. Ա. Սահակյանը իր փորձերում ցույց տվեց, որ երևանյան ցեղախմբի մսացու ճտերի միջին քաշը արդեն 90 օրական հասակում հասնում է 1,3 կգ (զգալի թվով մատղաշներ այդ հասակում ունենում են 1,4—1,5 կգ և ավելի քաշ) 1 կգ քաշաճի վրա ծախսելով ընդամենը 3,34 կերի միավոր կտրմ մոտ 50% պակաս քան ռուսական սպիտակ ցեղի մատղաշները: Իմիջիայլոց ասենք, որ 1 կգ քաշաճի վրա խոշոր և մանր եղջերավոր կենդանիները ծախսում են 8-9 կերի միավոր: Անգամ ամենավաղաճաս մսատու գյուղատնտեսական կենդանին՝ խոզը 1 կգ քաշաճի վրա ծախսում է 5—6 կերի միավոր:

Քիմիական անալիզները և օրգանոլեպտիկ համտեսումնե-

րը ցուց են տվել, որ երևանյան ցեղախմբի մսացու ճտերի սպանդային քաշը հասնում է 92%, մսի մեջ սպիտակուցները կազմում են 21,2%, ճարպը 18,4%, չոր նյութերի քանակը՝ 34%։ Միսը աշքի է ընկնում բարձր սննդարարությամբ և լավ համով։

Վերևում նշվեց, որ շատ բարձր արդյունք է տալիս երեւանյան ցեղախմբի աքաղաղների և ռուսական սպիտակ ցեղի հավերի արդյունաբերական տրամախաչումը։ Մեր մասսայական գիտա-արտադրական փորձերում այդպիսի տրամախաչումից ստացված խառնածինների տարեկան ձվատվությունը կազմեց 188—190 ձու, իսկ կենդանի քաշը 18% գերազանցեց ռուսական սպիտակ ցեղի հավերի քաշին։

Բերած փաստական տվյալները համոզիչ կերպով խոսում են երևանյան ցեղախմբի հավերի տնտեսական և բիոլոգիական մի շարք առավելությունների և մասնավորապես նրանց բարձր մթերատվության ու կենսունակության մասին։ Մեր ոեսպութիկայի կոլտնտեսությունները և սովխոզները, ինչպես նաև թոշնաբուծական ֆաբրիկաները և իթկ-ի տոհմային տնտեսությունները համարձակ կերպով կարող են կազմակերպել այդ ցեղախմբի թոշունների մասսայական բուժումը իրենց տնտեսություններում և միաժամանակ նպաստել նրանց տարածմանը կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների անհատական տնտեսություններում։ Մենք համոզված ենք, որ նոր ցեղախմբի լայն տարածումը կոլտնտեսություններում և սովխոզներում մեծ խթան կհանդիսանա անասնաբուծության այդ կարևոր ճյուղի արագ զարգացմանը և նրա շհավետության բարձրացմանը։

Ստորև բերում ենք երևանյան ցեղախմբի հավերի կերակրման տիպային մի կերաբաժին, որով կերակրելիս յուրաքանչյուր ածանից տարեկան ստանում են 145—150 ձու և ավելի։

ԵՐԵՎԱՆԻ ՑԵՂԱԽՄԲԻ ՀԱՎԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՏԻՊԱՅԻՆ ԿԵՐԱԲԱԺԻՆ

Կերի անունը	Օլեկան 1 գլխին գրամն.					Կերակրման ռեժիմը
	ճմում՝ նր 12	3	դար- նանը	4-5	ամ- սանը	
	6	8	9	11		
Կոմքիկեր թոշունի . . .	70	20	80	70		
Տորեն, թեփ մանը . . .	10	15	15	10		
Բամբակի քուսպ . . .	10	12	10	12		
Գարի ծլեցըած . . .	15	10	10	10		
Առվույտի ալյուր . . .	10	—	—	7		
Թարմ կանաչ . . .	—	40	50	15		
Քաշած կաթ . . .	25	30	25	30		
Շաքարի ճակնդեղ . . .	20	—	—	20		
Գաղար	15	—	—	15		
Սիլսո	15	—	—	10		
Խաղողի մղվածք . . .	20	—	—	20		
Կավիճ կամ խխունջ . . .	4	4	3	3		
Ոսկըի ալյուր . . .	3	3	3	2		
Աղ կերակրի	0,4	0,4	0,4	0,3		
	217,4	194,4	196,4	234,3		

Կերի պրոցեսում են օրեկան 3 անգամ՝

առավագան ժամեր 7-ին

ցերեկիւա ժամեր 12-ին և

երեկոյան ժամեր 5-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերություն հրատարակությամբ 1963 թվականին լույս են տեսել գիտա-աթեիստական բնույթ կրող հետեւյալ բրոշյուրները՝

Թ. Ա. Խաչյան — Մարքսիզմ-լենինիզմը կրոնի մասին

Հ. Գ. Բատիկյան — Ժամանակակից բիոլոգիան և կրոնը

Տ. Ա. Մարգարյան — Կրոնը և կինը

Հ. Ա. Աղայան — Կրոնական հավատքի առաջացումը

Ա. Ա. Կարապետյան — Պատկերացում հոգու մասին

Վ. Կ. Հարուրյունյան — Քրիստոնեության տարածումը

Հայաստանում և նրա հետևանքները

Մ.Ա. Օդարաշյան — Արդյոք գոյություն ունի՞ ճակատագիր

Պ. Հ. Գևորգյան — Տիեզերքի նվաճումը և կրոնը

Վերոհիշյալ բրոշյուրները ձեռք բերելու համար դիմել
գործի վաճառքի խանութներին:



Հրատ. խմբագիր՝ Հ. Սինանյան
Ավագ սրբագրիչ՝ Ա. Շաղամյան

ՎՃ 10086

Գառագեր 1446


Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 15/IV 1963 թ..
Ստորագրված է տպագրության 10/V 1963 թ..
Թուղթ $70 \times 108^1/32$, Տպագր. 1 մամ. հրատ. 0,5 մամ..

Անվճար

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակությունների
և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության
№ 6 տպարան, Երևան, Թումանյանի փողոց № 51, 1963 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035942

(05κ)

A-
35942

ԱՆՎՃԱՐ